

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն №)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ**

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետ՝ համալսարան) կանոնադրության հիմնադրույթներին համապատասխան համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնատեղերի ընտրության կարգը:
2. Պրոֆեսորի և առաջին անգամ դոցենտի պաշտոնում ընտրվող հավակնորդի (ների) մրցույթը կազմակերպվում է համալսարանի գիտական խորհրդում: Հետագայում դոցենտի պաշտոնում վերընտրվելու դեպքում, ինչպես նաև ավագ դասախոսի, դասախոսի և ասիստենտի հավակնորդների ընտրությունը և վերընտրությունը կազմակերպվում է ֆակուլտետի գիտական խորհրդում:
3. Պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնատեղերի համալրման նպատակով պաշտոնատեղերի հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում համալսարանի գիտական քարտուղարին են ներկայացնում՝
 - դիմում բուհի ռեկտորի անունով,
 - կադրերի հաշվառման անձնական թերթիկը,
 - քաղվածք աշխատանքային գրքույկից,
 - համառոտ ինքնակենսագրություն,
 - գիտական (որակավորման) աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները,
 - տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը,

- տվյալներ պարզևատրումների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ:
- 4. Համալսարանի գիտական քարտուղարը հավակնորդների գործերը ուղարկում է համապատասխան ֆակուլտետի դեկանին, որը դրանք հանձնում է ամբիոնի վարիչին՝ ըստ պատկանելիության:
- 5. Ամբիոնի վարիչը 2 շաբաթվա ընթացքում կազմակերպում է հավակնորդների գործերի քննարկումը և ֆակուլտետի նշանակումների հանձնախումբ է ներկայացնում ամբիոնի կարծիքը: Կարծիքում նշվում են հավակնորդների մասնագիտական բնութագիրը ու մանկավարժական գործունեության գնահատականը-ամբիոնի հաստիքով, ինչպես նաև համալսարանից ամբիոնում համատեղությամբ աշխատող դասախոսների քվեարկության արդյունքները (փակ կամ բաց՝ ըստ ամբիոնի նիստի որոշման), առաջարկվող տարակարգում հավակնորդին հաստատելու հիմնավորումը:
- 6. Մրցույթի մասնակիցները կարող են ներկա լինել ամբիոնի նիստերին:
- 7. Թափուր պաշտոնի համար մեկից ավելի դիմումների առկայության դեպքում ամբիոնի նիստում գործերի քննարկման արդյունքով ամբիոնը կարող է հիմնավորված առաջնություն տալ հավակնորդներից մեկին:
Պրոֆեսորի և առաջին անգամ դոցենտի պաշտոնին հավակնող հավակնորդների գործերը ամբիոնի նիստում և ֆակուլտետի գիտական խորհրդում քննարկելուց հետո ներկայացվում է համալսարանի նշանակումների հանձնախումբ, սահմանված կարգով ընթացք տալու համար: Դոցենտի պաշտոնում վերընտրվող, ինչպես նաև ավագ դասախոսի, դասախոսի և ասիստենտի պաշտոնին հավակնող հավակնորդների գործը 2 շաբաթվա ընթացքում ամբիոնի նիստում քննարկելուց հետո հանձնվում է ֆակուլտետի նշանակումների հանձնախմբին:
- 8. Ֆակուլտետի նշանակումների հանձնախումբը 2 շաբաթվա ընթացքում քննարկում է հավակնորդների գործերը, կազմում է զեկուցագրեր (գիտա մանկավարժական ձևաթերթեր) և ներկայացնում ֆակուլտետի գիտական խորհրդին:
- 9. Հավակնորդների փաստաթղթերի քննարկման որևէ փուլում բացասական կարծիք ստանալու դեպքում, եթե հավակնորդը չի հանում իր թեկնածությունը, ապա

փաստաթղթերը համապատասխան կարծիքով փոխանցվում են հաջորդ փուլ՝ համաձայն սույն կանոնակարգի:

10. Եթե հավակնորդի տվյալները չեն համապատասխանում առաջարկվող պաշտոնի որակական չափանիշներին, հանձնախումբը (համալսարանի, ֆակուլտետի) զեկուցագրով պատճառաբանված հիմնավորում է իր ընդունած որոշումը: Հավակնորդը իրավունք ունի ծանոթանալու իր գործին առնչվող փաստաթղթի հետ և քննարկումների ցանկացած փուլում հանել իր թեկնածությունը:
11. Թափուր պաշտոնատեղի համար մեկից ավելի դիմումների առկայության դեպքում նշանակումների հանձնախումբը կարող է հիմնավորված առաջնություն տալ հավակնորդներից մեկին:
12. Ֆակուլտետի գիտական խորհուրդը նշանակումների հանձնախմբի առաջարկության հիման վրա 2 շաբաթվա ընթացքում քննարկում է հարցը և փակ (գաղտնի) քվեարկությամբ ընդունում որոշում:
13. Նիստը սկսվում է եթե ներկա են (համալսարանի, ֆակուլտետի) գիտխորհրդի հաստատված կազմի ոչ պակաս՝ քան 2/3-ը:
14. Նախագահողը ձայնը տալիս է նշանակումների հանձնախմբի նախագահին հրապարակելու հանձնախմբի և ամբիոնի եզրակացությունը յուրաքանչյուր թեկնածուի համար՝ ըստ փաստաթղթերի ներկայացման հերթականության:
15. Հանձնաժողովի եզրակացությունը հրապարակելուց հետո, նախագահողը գիտխորհրդի անդամներին և հրավիրված անձանց առաջարկում է տալ հարցեր: Տրվող հարցերի սահմանափակման առաջարկը կատարում է նախագահողը և որոշումն ընդունվում է գիտխորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:
16. Թափուր պաշտոնատեղի հավակնորդին փակ (գաղտնի) քվեարկության թողնելու կամ նրա բացարկի մասին որոշումն ընդունվում է յուրաքանչյուր թեկնածուի քննարկումից հետո, գիտխորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:
Թեկնածուն կարող է հայտարարել ինքնաբացարկ մինչև գիտխորհրդի որոշմամբ նրան փակ (գաղտնի) քվեարկության թողնելու պահը:

17. Նախագահողը ամփոփում է քննարկումների արդյունքները և գիտխորհրդի անդամներին ներկայացնում փակ (գաղտնի) քվեարկության կարգը:
18. Նախագահողի առաջարկով փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար գիտխորհուրդը բաց քվեարկությամբ իր կողմից ընտրում է 3 հոգուց ոչ պակաս հաշվիչ հանձնաժողով, որի կազմում բացառվում է այն անձանց ընդգրկումը, որոնց թեկնածությունները առաջադրված են: Հաշվիչ հանձնաժողովն իր կողմից ընտրում է հանձնաժողովի նախագահ, իսկ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
19. Բացարկ չստացած թեկնածուները մտցվում են քվեաթերթիկի մեջ: Թափուր պաշտոնատեղերում մեկ թեկնածուի առկայության դեպքում, քվեաթերթիկի մեջ պետք է լինեն «կողմ» և «դեմ» բառերը: Մեկից ավելի թեկնածուների քվեարկության համար քվեաթերթիկի մեջ այբբենական կարգով նշվում են յուրաքանչյուր թեկնածուի ազգանունը, անունը (հավելված 1.2):
20. Հաշվիչ հանձնաժողովը գիտխորհրդի յուրաքանչյուր անդամի տալիս է մեկ քվեաթերթիկ, որը ստանալիս նա ստորագրում է գիտխորհրդի ներկայաթերթիկում:
21. Միակ թեկնածուի քվեարկության դեպքում քվեաթերթիկում թողնվում է «կողմ» կամ «դեմ» բառը:
- Մեկից ավելի թեկնածուների դեպքում քվեաթերթիկում թողնվում է միայն մեկ թեկնածուի անուն ազգանունը, որի օգտին գիտխորհրդի անդամը քվեարկում է՝ ջնջելով մյուս թեկնածուների անունները, ազգանունները, որոնց դեմ է քվեարկում: Բոլոր թեկնածուներին դեմ քվեարկելու դեպքում, գիտխորհրդի անդամը քվեաթերթիկում ջնջում է բոլոր թեկնածուների անունները, ազգանունները:
22. Քվեարկությունն ավարտելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն:
- Մեկից ավելի թեկնածուների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ հավաքած ձայների քանակի նվազման հաջորդականության: Անվավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում՝
- ա) թողնված կամ ջնջված են թե «կողմ» և թե «դեմ» բառերը (միակ թեկնածուի քվեարկության դեպքում),

բ) թողնված են երկու և ավելի թեկնածուների (մեկից ավելի թեկնածուների քվեարկության դեպքում),

գ) քվեաթերթիկում հստակ չեն ջնջված «կողմ» և «դեմ» բառերը և անուն ազգանունները, կատարված են սույն կարգի կետ 19-ով չնախատեսված նշումներ, ընդգծումներ և այլ նշաններ:

Քվեաթերթիկը անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը:

23. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին, որից հետո հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը հաստատվում է գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

24. Գիտական խորհրդի որոշումը համարվում է ընդունված, եթե քվեարկությանը մասնակցել են գիտխորհրդի հաստատված կազմի առնվազն 2/3-ը:

25. Մրցույթի մասնակիցները կարող են ներկա լինել գիտական խորհրդի նիստին:

26. Միակ թեկնածուության դեպքում թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը:

27. Մեկից ավելի թեկնածուների դեպքում ընտրված է համարվում գիտխորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնություն հավաքած թեկնածուն:

28. Մեկից ավելի թեկնածուների դեպքում թեկնածուների կողմից գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնություն չհավաքելու դեպքում գիտական խորհրդի նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են.

- առավելագույն ձայներ ստացած առաջին երկու թեկնածուները, կամ
- առավելագույն ձայն ստացած 1-ին թեկնածուն և նույնաքանակ ձայներ ստացած 2-րդ ու հաջորդ թեկնածուները, կամ
- առավելագույն և նույնաթիվ ձայներ ստացած երկու և ավելի թեկնածուները:

29. Կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է սույն կարգի կետ. 19-25-ով սահմանված ընթացակարգով: Ընտրված է համարվում՝

ա) կետ 27-ով իրականացվող կրկնակի քվեարկության դեպքում առավելագույն ձայներ ստացած թեկնածուն.

բ) կետ 29-ով իրականացվող կրկնակի քվեարկության դեպքում գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնություն ստացած թեկնածուն:

30. Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշման հետ ֆակուլտետի դեկանի անհամաձայնության դեպքում վերջինս կարող է ռեկտորի թույլտվությամբ գործը տեղափոխել համալսարանի նշանակումների մրցութային հանձնաժողովի և գիտխորհրդի քննարկմանը:

31. Թափուր պաշտոնատեղի միակ թեկնածուի կողմից գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնություն չստանալու, ինչպես նաև կրկնակի քվեարկության արդյունքով առավելագույն, բայց հավասար ձայներ ստացած երկու և ավելի թեկնածույնների առկայության դեպքում ընտրությունը համարվում է չկայացած:

32. Առանձնահատուկ դեպքում /քվեարկության բացասական արդյունք և այլն/ համալսարանի ռեկտորն իրավասու է մինչև 1 տարի ժամկետով թափուր պաշտոնում հրամանագրել պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության կարգի որակական պահանջները բավարարող տվյալ կամ այլ բուհի մասնագետի և տվյալ հրամանագրի ժամկետի ավարտին կազմակերպել ընտրության նոր գործընթաց:

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՑԹՆԵՐ

ՀԱԱՀ-ի գիտական քարտուղարը պրոֆեսորի և առաջին անգամ դոցենտի պաշտոնին հավակնող հավակնորդների գործերը հանձնում է ֆակուլտետի դեկանին /համալսարանի պրոռեկտորին/, որը 2 շաբաթվա ընթացքում կազմակերպում է հավակնորդների գործերի քննարկումը և համալսարանի նշանակումների հանձնախումբ է ներկայացնում ամբիոնի կարծիքը:

Ծանոթություն

Դոցենտի և պրոֆեսորի պաշտոնատեղերը կարող են զբաղեցնել համապատասխանաբար գիտությունների թեկնածուի և դոկտորի գիտական աստիճան ունեցող անձինք, որոնց տվյալները բավարարում են ԲՈՀ-ի պահանջներին: